# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

## 22.12.2020 ԱՔ-ԳՀԾՁԲ-20/16 կնքված պայմանագրի շրջանակներում փոփոխություն կատարելու մասին

«22» հունվարի 2021թ.

ք. Արմավիր

Արմավիրի համայնքապետարանն ի դեմս համայնքի ղեկավար Դ. Խուդաթյանի, որը գործում է Արմավիրի համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԼՍ Նախագիծ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արայիկ Սարգսյանի, որը գործում է «ԼՍ Նախագիծ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 22.12.2020թ.-ին Կողմերի միջև կնքված N ԱՔ-ԳՀԾՁԲ-20/16 գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 7.5 և 7.15 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն համաձայնագրով Կողմերը որոշեցին հաստատել Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման /գնման ժամանակացույց/ և դրանց դիմաց ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը /վճարման ժամանակացույց/ համաձայն կից հավելվածների:

1.2 Համաձայնագրի պայմանները կիրառվում են Պայմանագիրը կնքելուց հետո, մինչև դրա հիման վրա Պայմանագիրն ուժի մեջ մտնելու վերաբերյալ համաձայնագիր կնքելը, կողմերի միջև ծագած փաստացի հարաբերությունների նկատմամբ:

1.3 Սույն համաձայնագրում չնշված, սակայն Պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:

1.4 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Կողմերի միջև կնքված Պայմանագրի անբաժանելի մասը:

1.5 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Արմավիրի համայնքապետարան | «ԼՍ Նախագիծ» ՍՊԸ |
| Ք. Արմավիր, Հանրապետության 32 | Ք. Վանաձոր, Վարդանանց 122/100 |
| ՀՀ Ֆինանսների նախարարություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ, Վանաձոր մ/ճ |
| Հ/Հ՝ 900332201483 | Հ/Հ՝ 205142210991001 |
| ՀՎՀՀ՝ 04401882 | ՀՎՀՀ՝ 06956504 |
| Համայնքի ղեկավար՝ | Տնօրեն՝ Ա. Սարգսյան |
| Դ. Խուդաթյան------------------------------- (ստորագրություն) Կ.Տ. | Ա. Սարգսյան------------------------------- (ստորագրություն) Կ.Տ |

Հավելված
Հաստատված է
«22» հունվարի 2021թ. կնքված
N ԱՔ-ԳՀԾՁԲ-20/16
գնման պայմանագրի փոփոխությամբ

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 71241200/509 | Նախագծել Արարատյան և Աբովյան փողոցների Արարատյան-Հանրապետության հրապարակի հատվածի երթևեկելի մասի հիմնանորոգում: Փողոցները ասֆալտածածկ են: Նախատեսել Ասֆալտածածկի ֆրեզում, քանդված հատվածների փոսային նորոգում, քանդված և թեքված բազալտե եզրաքարերի ուղղում և նոր բազալտե եզրաքարերի տեղադրում, հարթեցնող ասֆալտաշերտի իրականացում, գոյություն ունեցող վաքերի վերականգնում և միաշերտ 5սմ հաստությամբ ասֆալտբետոնի տեղադրում: Արարատյան փողոցի երթևեկելի մասն ունի 950գծմ երկարություն, լայնությունը՝ 14-20գծմ, Աբովյան փողոցն ունի 770գծմ երկարություն, լայնությունը՝ 9,3-10,5գծմ: Նախատեսել ճանապարհային կահավորանքի և անվտանգության տարրերի կառուցում(ճանապարհային նշաններ, գծանշում և այլն): Նախատեսել շինարարության ընթացքի տեխնիկական , հեղինակային հսկողության և լաբորատոր փորձարկումների իրականացում: Իրականացնել նախագծի փորձաքննություն: Փաստաթղթերը պետք է ներկայացված լինեն գործող նորմերին և պատվիրատուի կողմից ներկայացված ճարտարապետահատակագծային առաջադրանքների և պահանջների համաձայն՝ ճարտարապետաշինարարական և նախահաշվային մասերից: Նախագծերը ներկայացնել 5(հինգ) օրինակից, տպագիր և 2(երկու) օրինակից էլեկտրոնային կրիչով (PDF ֆորմատով): Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել փորձաքննության եզրակացությամբ: ՀՀ Կառավարության թիվ 596-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ քաղաքաշինության փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգի» համաձայն, նախագծում ներառել անհրաժեշտ լաբորատոր փորձարկումների ցանկը: **Տվյալ գործունեությունը համարվում է լիցենզավորման ենթակա:** | Լրակազմ | 1390000 | 1 | ք. Արմավիր, Հանրապետության 32 | Մինչև 08.02.2021 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | 71241200/510 | Նախագծել բետոնյա 15*30սմ չափերի եզրաքարերով, ջրահեռացման համակարգով, խճե նախաշերտով, երկշերտ ասֆալտբետոնով: Եղյան փողոցի երկարությունը 135գծմ է, լայնությունը՝ 9գծմ: Բաղրամյան թիվ 6,8,10 բ/բ շենքերի բակային տարածքն ունի 220գծմ երկարություն, լայնությունը՝ 6-8գծմ: Մայթերի երկարությունը 210գծմ է, լայնությունը՝ 1,5-2,5 գծմ: Բաղրամյան 9/1,2,3,4 բ/բ շենքերի բակային տարածքի երթևեկելի տարածքի երկարությունը 340գծմ է, լայնությունը՝ 6-8գծմ: Մայթերի երկարությունը 350գծմ, լայնությունը՝ 2-3գծմ: Նախատեսել ճանապարհային կահավորանքի և անվտանգության տարրերի կառուցում(ճանապարհային նշաններ, գծանշում և այլն): Նախատեսել շինարարության ընթացքի տեխնիկական, հեղինակային հսկողության և լաբորատոր փորձարկումների իրականացում: Իրականացնել նախագծի փորձաքննություն: Փաստաթղթերը պետք է ներկայացված լինեն գործող նորմերին և պատվիրատուի կողմից ներկայացված ճարտարապետահատակագծային առաջադրանքների և պահանջների համաձայն՝ ճարտարապետաշինարարական և նախահաշվային մասերից: Նախագծերը ներկայացնել 5(հինգ) օրինակից, տպագիր և 2(երկու) օրինակից էլեկտրոնային կրիչով (PDF ֆորմատով): Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել փորձաքննության եզրակացությամբ: ՀՀ Կառավարության թիվ 596-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ քաղաքաշինության փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգի» համաձայն, նախագծում ներառել անհրաժեշտ լաբորատոր փորձարկումների ցանկը: **Տվյալ գործունեությունը համարվում է լիցենզավորման ենթակա:** | Լրակազմ | 1890000 | 1 | Ք. Արմավիր, Հանրապետության 32 | Մինչև 08.02.2021 |
| 3 | 71241200/511 | Ա/բետոնե ծածկի ճաքերի լցափակում ջրիկ բիտումով ներառյալ ավազի վերին շերտը: Խճի նախաշերտի կառուցում (15-20)մմ և (20-40)մմ ֆրակցիաների 80մմ հաստությամբ: Ճանապարհի փոսային նորոգում «Բ» տիպի մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթով 5սմ հաստությամբ: **Տվյալ գործունեությունը համարվում է լիցենզավորման ենթակա:** | Լրակազմ | 390000 | 1 | Ք. Արմավիր, Հանրապետության 32 | 2021թ.-ի 1-ին եռամսյակի ընթացքում |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Արմավիրի համայնքապետարան
Ք. Արմավիր, Հանրապետության 32
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ՝ 900332201483
ՀՎՀՀ՝ 04401882
Համայնքի ղեկավար՝
Դ. Խուդաթյան ______________
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԼՍ Նախագիծ» ՍՊԸ
Ք. Վանաձոր, Վարդանանց 122/100
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Վանաձոր մ/ճ
Հ/Հ՝ 2051422109911001
ՀՎՀՀ՝ 06956504
Տնօրեն՝ Ա. Սարգսյան
Ա. Սարգսյան ______________
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված2
Հաստատված է
«22» հունվարի 2021թ. կնքված
N ԱՔ-ԳՀԾՁԲ-20/16
գնման պայմանագրի փոփոխությամբ

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71241200/509 | Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Արարատյան փողոցի, Աբովյան փողոցի Արարատյան-Հանրապետության հրապարակի հատվածի հիմնանորոգման աշխատանքներ | 1390000 | 1390000 | 1390000 | 1390000 | 1390000 | 1390000 | 1390000 | 1390000 | 1390000 | 1390000 | 1390000 | 1390000 | **1390000** |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | 71241200/510 | Բաղրամյան թիվ 6,8,10 բ/բ շենքերի բակային տարածքի և Եղոյան փողոցի բնակելի շենքերին հարող հատվածի, Բաղրամյան 9/1,2,3,4 բ/բ շենքերի բակային տարածքների հիմնանորոգում | 1890000 | 1890000 | 1890000 | 1890000 | 1890000 | 1890000 | 1890000 | 1890000 | 1890000 | 1890000 | 1890000 | **1890000** |
| 3 | 71241200/511 | Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի ասֆալտածածկ փողոցների ընթացիկ նորոգում | 390000 | 390000 | 390000 | 390000 | 390000 | 390000 | 390000 | 390000 | 390000 | 390000 | 390000 | **390000** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Արմավիրի համայնքապետարան
Ք. Արմավիր, Հանրապետության 32
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ՝ 900332201483
ՀՎՀՀ՝ 04401882
Համայնքի ղեկավար՝

Դ. Խուդաթյան________________
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԼՍ Նախագիծ» ՍՊԸ
Ք. Վանաձոր, Վարդանանց 122/100
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Վանաձոր մ/ճ
Հ/Հ՝ 2051422109911001
ՀՎՀՀ՝ 06956504
Տնօրեն՝ Ա. Սարգսյան

Ա. Սարգսյան________________
(ստորագրություն)
Կ.Տ.